

**ՀԱՇԱԿ**  
**ՈՍԿԵՂԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ**

**ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ**  
**ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**  
**ԱՅԼՈՎԲՆ ՀԱՆԴԵՐԶ**

ԸՆԴ ԽՆԱՄՈՎ.

Ա. ՄԱՏԱԹԻԱՅ ԳՈՐԱԳՈՅԵԱՆ ԵՒ Յ. ԳՈՐԳԵՆԻ

ՏԱՐԻ Բ.

ԹԻՒ Գ. — 1 ՄԱՐՏ



Ի Կ. ՊՈԼԻՍ  
ԱՌ ՅՈՎՍԵՓԱՅ ԳՍՎԱՅՆԱՆ

1887

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Պատմութիւն Հայ մատենագրութեան . . . . . Ա. Մ. Գ.



## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հատակոտորք ի նախնեաց . . . . . Ոսկ.  
Համանուանք . . . . . Ա. Մ. Գ.  
Թուրք առ Խնամակալութիւն . . . . . Ս. Գ.  
Առանձինն բանք Հայերէն լեզուի . . . . . Յ. Գ.



# Ճ Ա Շ Ա Կ

ՌԱՍԿԵՂԵՆՆ ԳՊՄՄԻԹԻԿԱՆ

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

### ՀԱՅ ՄԱՏՆԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՍԿԶԲԱՆԻ ԱՆՏԻ ՄԻՆԶԵԻ ՅԱՌԱՋԻՆ ԿԵՍ ԱՆԴԻ Ե. ԳԱՐՈՒ

Յայնց որ ասացան՝ թուի մեզ առանց երկբայութեան թէ երգք վիպասանացն են գործ ժամանակի հեթանոսութեան: Եթէ այնպէս է, ապա յիրաւի է մեզ ի ճշգրիտ նմանութենէ լեզուի նոցա ընդ լեզուին թարգմանչաց հաւաստեալ ածել ի վերայ, զի եթէ առաջինն (վիպասանացն) է հին և բուն հայական (որպէս և էն իսկ,) է հին և բուն հայացի և երկրորդն: Առանց երկբայութեան է և այն թէ լեզու, եւ վիպասանացն եւ թարգմանչաց, չկարէր լինել օտար և անընդել ժողովրդեան: Ո՞ր իշխիցէ պնդել թէ լեզու հին պուրեպիսացն Յունաց և Հռոմայեցոց, Հոմերի, Վիրգիլեայ և այլոց, և եկեղեցական հարցն, Աթանասայ, Կիւրղի, Բարսղի, Ոսկեբերանի, Օգոստինոսի, չէր ծանօթ և ընդեւական բարբառ ժողովրդեան ժամանակին, կամ թէ թարգմանութիւնք Հին և Նոր կտակարանացն, ասորին, լատինն, արաբացին և այլք, չեղեն լեզուաւ ազգացն որոց տուան թարգմանութիւնքն: Հայոց միայն դիպեցաւ հակառակն. վիպասանք և վարդապետք մեր էին առ ժողովուրդն խուժ, և ժողովուրդն առ նոսա դժուժ: «Բազմութիւն մարդկանն, նախարարացն և շինականութեան», որպէս ասէ Բուզանդ, միթէ առաջնց հասանելոյ ի վերայ մտացն և բանից, յախուռն իմն սիրէին «զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն, նմին հաւատային, և ի նոյն հանապազորդէին» (Բուզ. Գ. Ժ. Գ.): Եթէ և՛ Գիրն և՛ այլ եւս մատեանք թարգմանեալք կամ գրեալք յետ գիւտին նշանազրաց չէին ծանօթագոյն և ընդեւագոյն լեզուաւ Հայ ժողովրդ-

դեան , ամենեւին առանց նշանակութեան մնան բանք կորեան ժամանակակիցի , միջամուխ և ականատես . «Յայնմ ժամանակի (իսկ և իսկ զինի թարգմանութեան Գրոյն) երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր . յորում անկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն , և յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն , հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Գրիստոսի , միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւատարեւոցն (Սահակայ և Մեորոսայ)՝ հայաբարբառ հայերէնաբարբառս : Անդ էր այնուհետեւ սրտալիր ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն : Քանզի երկէր որ համբաւուցն անգամ օրոր էր կողմանցն այնոցիկ , յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան , առժամայն վազվազակի ամենայն իրացն եղելոց ինքեմն լինէր : Ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն , այլ և յառաջագոյն յաւիտենիցն , և ապա եկելոցն , սկզբանն և կատարածի , և ամենայն աստուածատուր սուանդութեանցն» (կորիւն) : Զի՞նչ նշանակիցէ հայաբարբառ հայերէնաբարբառս լինել Մովսիսի , Պաւղոսի , այլովքն հանդերձ , և կամ երկրին , այն է աշխարհին կամ ազգին Հայոց , յանկարծ ինքեմն լինել « աստուածագործ սքանչելագործութեանց » պատմելոց ի Գիրս . ո՞չ ապաքէն լսելովն և ընթեռնելով ազգին , ռամիաց անգամ , զնոսա իւրեանց բընակ լեզուաւ ի թարգմանութեան անդ Գրոյն :

Փարպեցին , ոչ ինչ հեռի ժամանակաւ ի թարգմանութենէ Գրոյն , յայտ առնէ՝ բազում ուրեք թէ՛ Սուրբ զիրք թարգմանեցան հայերէն իբրեւ ի լեզու որ արդէն իսկ ծանօթ էր ազգին : « Ամենայն անձն , » ասէ , « . . . օրպէս ի խաւարէ՝ յասորի տանջանայն զերծեալք ի լոյս խնդային : Բայց տարակուսեալք կասէին յանչքութենէ Գրոց սրբոց . քանզի ոչ գոյին զեռ եւս հայերէն լոգըն-ինեմբ սուրբ կտակարանք եկեղեցւոյ : . . . Ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարեւոր գործ , թարգմանել զիրս ի յոյն լեզուոյն ի հայ բարբառ . վասն զի ոչ էին այնպէս տեղեակ զիտնապէս հրահանգի յունարէն ուսման : . . . Սկսան արդաչել զսուրբ կաթողիկոսն Սահակ՝ արկանել զանձն յաշխատութիւն

հոգեւոր և թարգմանել զԱստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուոյ ի հայ Բարբառս» (Փարս. Ժ. ԺԱ) : Կամի ասել . Ի գտանելն շանաբրաց ալիաբետաց Հայոց զերծաւ ազգն ի հարկէ անտի ուսանելոյ զասորի դպրութիւն . այլ տակաւին չգոյին գիրք , մանաւանդ կտակարանքն , ի պէտս եկեղեցւոյ աշտամանց . վասն որոյ ազաչեն զՍահակ որ հմուտն էր յոյն լեզուի , և մանաւանդ արուեստին թարգմանչութեան , փոյթ առնել թարգմանելոյ զկտակարանան ի Հայ լեզու . առ ազատելոյ յարկանելոյ ի կիր դասորերէն թարգմանութիւնն : Յայտնագոյն եւս առնէ զայս ի ստորեւ . « Սյլ ասորի մեծաջան և անօգուտ ուսմամբքն աշխատեալք . . . բազմութիւնք (հայ) ժողովրդոց «նայն» և իսպորտ հրաժարեալք քնայն յեկեղեցայն . և ուսուցիչքն (վարդապետք) հանելով յոգւոց և հառաչելով՝ զղջանային զսնտի ջանն իւրեանց , յորում ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալս ի վարդապետութենէ հոգեւոր խրատուցն (ընթերցուածոց . . . ) մինչեւ գտաւ գիր (և թարգմանեցան գիրք ի Հայ լեզու) : » Եւ յետ յիշելոյ զթարգմանութիւն գրենոյն , ասէ . « Բազմութիւնք արանց և կանանց ժողովելոց (յեկեղեցւոյ . . . ) շահեալք լի հոգեւոր օգտիւ , ընթանային խնդալիցք . . . արձակեալք իւրաքանչիւր ի տունս , մեծամեծք և տղայք (անգամ) սաղմոսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս , ի հրապարակս և ի փողոցս և առ տնին : . . . Հանապազարուղիս հոսէին վտակք յասողացն մեկնութեանց (ի հարց) , որք զճաճուկս մարգարէից բերելով ի յայտնութիւն՝ սեղանս ամենալիցս հոգեւոր խորակօք դնէին սոռալի ամենայն ժողովրդեան : »

Համառօտիւ ասել , առանց հակառակութեան է թէ լեզուն յոր թարգմանեցան գիրք՝ էր , ըստ էութեանն գոնեայ , ծանօթ և ընդէլ Հայ ժողովրդեան , և բեմն որ ցայնժամ օտարն և այլալեզու էր՝ եղև ընտանի և սեպհական :

Ի լինելոյ լեզուին վիսպասանաց և թարգմանչաց ծանօթ և ընտանի ժողովրդեան՝ ոչ գայ ի հարկէ իմն զհետ , թէ չէր և չկարէր լինել արուեստ ինչ կամ հնարողութիւն որով հըմուտք և վարիչք լեզուին ելեւելս զմիւսամբք առնէին տալ ծաղիւղ և բարգաւաճել լեզուին ի հարկին և ըստ պիտոյից ,

եթէ մանաւանդ այլուստ իցէ հնար ցուցանել հաւատեալ  
և գտակաւ՝ թէ գոյր արդարեւ այնպիսի արուեստ կամ հնա-  
րագիտութիւն որ յուժի և յաստով պահէր զլեզուն ոչ առ-  
վիպասանօք միայն, այլ և առ թարգմանչօք, և յորոյ ի խա-  
փանելոյ և յանկանելոյ ՚ի մոռացօնս՝ անկաւ և լեզուն:

Յառաջ քան զայս, ՚ի պատմութեան մերում՝ զՀայ լեզ-  
ուէ (Ս. տարի, էջ 17,) յիշեցաք միանգամ հարեւանցի իմն  
զհանձարեղ գործ Տէրվիչեան վարդապետի: Գործ հմուտ  
քննչին է զուտ լեզուաբանական, և կէտ նպատակի նորա է,  
որպէս և անուն մատենին յայտ առնէ, ՚ի համեմատութենէ  
անտի հնդիկ-եւրոպական անուանեալ քոյր լեզուաց, որպի-  
սի են սլաւական և գերմանական խումբք, և մանաւանդ  
յոյն և լատին և ղենտ, հանել գտակաւ զտարերս հնդիկ-  
եւրոպական մայր լեզուին. ՚ի համեմատութեան անդ արդա-  
րեւ ոչ սակաւ ուրեք ցուցանէ Տէրվիչեան ՚ի չքնաղ մատե-  
նին զարդերս մերձաւորութեան զոր հայ ոստն ունի ընդ հըն-  
դիկ-եւրոպական բնոյն, մերձաւորութիւն՝ որ շատ և բա-  
ւական է տալ հանդէս հաւանութեան՝ թէ մին ՚ի հարազտ-  
տադոյն դստերաց կամ ՚ի թայրաթոտաց հնդիկ-եւրոպական  
ցեղին է և հայն:

Մինչ Տէրվիչեանն այսպէս գայ զուզողն որ խաղայ յե-  
րակս հնդիկ-եւրոպական ծառոյն, այլ ոմն պատուական ծե-  
րունի, Տէր Յովհաննէս քահանայ Հիւնքեարպէյէնտեան,  
զհայ ոստն ուրոյն առեալ ՚ի քնին, իւրովք քսանամեայ  
խուզիւքն ածէ ՚ի յայտ ՚ի մեկնակ կազմութեան նորա զար-  
մանալիս. կամ, այլով բանիւ, եթէ մին առնէ նիւթ իւրոյ  
հետազօտութեան զարդանդն յորմէ ծնաւ Հայ լեզուն, միւ-  
սոյն գործ արարեալ է ցուցանել թէ յորմէ ստենէ և որով  
կաթամբ սնաւ նա: Յերկուց ստեանց, ՚ի յունականէն և ՚ի  
պարսկականէն, իրբեւ յերկցագոյն քերց, մանաւանդ ՚ի վերջ-  
նոյն, առեալ ջամբ հայերէնն (առանց անտես առնելոյ զմեւս  
եւս դրացիսն այլացեղս, զսեմականն և զդուրանական,) ա-  
զատօրէն և ոչ ծառայաբար, հալէ այնպէս գեղեցիկ և այն-  
պիսի նորանշան արուեստիւ և հնարողութեամբ (որպէս բա-  
ղում նրբութեամբ և հանձարով ածէ յայտ ծերունի քննիչն,)

մինչեւ , եթէ կարիցէ և կամիցի ոք ճշգրտիւ խելամուտ լինել հանճարագլխու թեանն , չգիտիցէ թէ ընդ արուեստն արդեօք հիանալ պարտ իցէ , եթէ ընդ հանճար այնորիկ որ ամեն ի յայտ զարուեստն : Թէ զինչ արուեստն այն կամ հընարք իցեն որովք առ լեզուն զայժմու կերպարանն , տեսցեն քննասէրք , յորժամ ի լոյս հանցի աշխատութիւն ծերունի քահանային : Խնդրի սակայն , մի յերեւոյթ նորութենէն խաբեալ՝ վաղվաղիցէ ոք արհամարհել զգլխուն իբրեւ անհեթեթ ինչ կամ մտացածին :

Մեք եկեացուք ի կարգ մերոյ պատմութեանս , այն է՝ ի պատմութիւն մատենագրութեան առաջնոյ կիսոյ Ն. դարուն :—

(Մատուցի յտուջ)

Ա. Մ. Գ.

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### Հ Ա Տ Ա Կ Ո Տ Ո Ր Ք Ի Ն Ա Խ Ն Ե Ա Յ

Թ Է Զ Է Պ Ա Ր Տ Յ Ա Ճ Ա Խ Ե Լ Ի Լ Կ Տ Ի Թ Ա Տ Ե Ր Ս

Ծառայ քո յորժամ ազաեղի ինչ խօսիցի քեզ լու ի լու , բազում տանջանս կրէ . նաեւ որդին իսկ կամ կին կամ ո՛վ և իցէ՝ և զայն դործիցէ , թշնամանս զիրսն կոչես : Իսկ եթէ մարդք շողաշոյտք և երից դանդաց գինք կոչեն զքեզ լիտի բանս լսել , ո՛չ միայն չցասնուս , այլ և ուրախ լինիս և գովես . և զի՞նչ ինչ այնր անհանճարութեան հանգոյն կայցէ : Այլ դու ինչ այնպիսի լիտիս չխօսիս , և այն զի՞նչ օգուտ իցէ . նաեւ զայն իսկ չառնես , և ուստի՞ յայտ իցէ . զի թէ ոչ խօսէիր , ասպա և ո՛չ յորժամ լէիրն՝ ծիծաղէիր , և ոչ այնչափ փութով ընթանայիր ի բարբառսն որ յամօթ առնէր զքեզ : Բայց , աղէ , ասա դու ցիս . ուրախութիւն ինչ իցէ զհայհոյութիւն լսել . և չզարհուրեսցիր , և ո՛չ զսկանջդ խնուս . թուի ինձ թէ դու երբեք ոչ հայհոյեսցես . բայց զի զհայհոյութիւնն ակործեղով լսես , գրեթէ դու հայհոյես :

Նոյնպէս և ի խառնխօսութեանն յայտնի ցուցանես . զի թէ ոչ ուրախ լինէիր ընդ աղտեղի բանսն , ապա և ոչ լսել անապիր :

Բազումք իսկ յորժամ ի գերեզմանաց դառնայցեն , նախ լուանան և ապա գան ի տուն . և որք ի թատերացն մեկնին՝ չհանեն յոգւոց , և չհեղուն վտակս արտասուաց . թէպէտ և մեռեալն չէ ինչ պիղծ , և մեղքն այնչափ աղտ և կեղտ կուտեն , մինչեւ բազում աղբերաց դժուարին լինելոյ առ ի սրբել , բայց միայն արտասուաց և խոստովանութեան . այլ չզգայ ոք կեղտոյն այնմիկ : Քանզի յորմէ պատշաճ է երկնչել՝ չերկնչիմք . վասն այնորիկ յորմէ չէ պատշաճ կասկածել՝ զարհուրիմք :

Զի՞նչ ժխորն իցէ , զի՞նչ աղմուկն և սատանայական ամբոխքն և դիւական կերպարանքն : Ո՞մն յետոյ գիտաւոր , մանուկ տիովք , և զարու բնութիւնն յիգական բարս դարձուցեալ , և աջօք և կերպարանօք և հանդերձիւք և ամենեւին իսկ առհասարակ զպատիւեր գիրգ և փափուկ աջկան յորինեալ : Եւ մեւս ծեր հանդէպ նմին՝ գհերս գերծեալ , և զմորուս գերծեալ , պնդեալ և կծկեալ զկողսն . և նախ քան զհերոն զամօթ կտրեալ և ի բաց ընկեցեալ , յանդգնեալ պատրաստ կայ ապտակակոծ զընկերսն առնելով , և խօսել և գործել զազտեղիս կազմ : Եւ մի փոյթ ամենեցուն է՝ ի հիմանց բրել զցածութիւն , և յամօթ առնել զբարս բնութեան , և կատարել զչար դիւին ցանկութիւնն : Քանզի բանք ալտեղիք անդ խօսին , և կերպարանք նչաւակութեան , և այնպիսի խայտառակութեան վարք , և գնացք սչրանաց , և հանդերձք լիտութեան , և բարբառք պատրանաց , և նուազք երգոց մտախաբաց , և աչաց մեղմեղանք , և սրինդք և փոզք , և ամենեւին ամենայն իրք և գործք՝ յետին անառակութեամբ և անհնարին պղծութեամբ լի :

Թէ կամիցիս սթափել , երթ ի բուրաստանս ուրեք , ուր աղբերք բլխիցեն , և վտակք դետոց խաղայցեն , և ի ծովալիճս . և միտ դիր ծաղկոցայն , և լիցես զգեղեցիկ երգս ճառանցն : Մօտեաց ի հանգրուանս մարտիրոսացն , ուր մարմնոց առնղջութիւնք և ոգւոց շահք , և վնաս ամենեւին ոչ ,

և ոչ զղջումն յետ ցանկութեանն , որպէս և անդ : Կին ունիս , և որդեակք իցեն . զի՞նչ հանգոյն այնր ցանկութեան կայցէ : Տուն ունիս , և բարեկամք իցեն . այդ առաւել զբոսանք վայելչութեան են . ցածութեամբ հանդերձ և շահս յաճախիցեն : Զի՞նչ քաղցր քան զորդիս կայցէ , աղէ , ասա . զի՞նչ հեշտական քան զկին : (Ոսկ. Մեկ. Մտթ. Գիրք Բ. ճառ ԺԲ.) :

## Հ Ա Մ Ա Ն Ո Ւ Ա Ն Ք

### Լ Ո Յ Ս , Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Լոյս , հակառակն խաւարի , արգասիք է լուսաւոր ինչ մարմնոյ , որպէս արեգական , ճրագի և բոցոյ հրոյ : « Եւ զարեգակն ի լոյս տուընջեան , և զլուսին և զաստեղա՝ ի լոյս գիշերոյ : » Վարի իբրեւ ջերմութիւն որ արդիւնք է լուսոյ . « Նստէր առ լոյսն . » « Զեռնոյր առ լուսովն : » Ասի և այլափոխ բանիւ . « Դուք էք լոյս սշխարհի . » « Լոյս ծագեաց արդարոյ : »

Զպէտպէս երեւոյթս լուսոյ յայտ առնեն ճահնչ , ճառագայթ , շող , նշոյ կամ նշող , փայլ իւրովք համազգեօք : ճահնչ , իբրեւ լոյս , լուսաւորութիւն . « Խաւար է օր Տեառն , և ոչ դոյ ի նմա ճահնչ . » « Ոչ միաբանի խաւար ընդ լուսոյ , և ոչ ճահնչն շողազարդ ընդ մթացեալ միգի » (Մծբ.) : Երկրորդ՝ իբրեւ ծագումն , պատկեր . « Քան զամենայն շարժունս շարժնագոյն է իմաստութիւն . ընդմտանէ ընդ ամենայն վրան յստակութեանն , քանզի ճահնչ է Աստուծոյ զօրութեանն , և ծագումն ճշմարիտ փառաց ամենակալին » (Իմ. Է. 24, 25) : Ի յաջորդ համարին որ կրկնումն է առաջնոյն , ըստ ոճոյ երբայական բանաստեղծութեան , ասի նշոյլ . « Քանզի նշոյլ է մշտնջենաւոր լուսոյն , և հայելի անարատ Աստուծոյ ազդեցութեանն , և սրտիւր առատութեան նորա : »

Յարմատոյ աստի ունիմք ճահնչաւոր , ճահնչաբէղ , ճահնչալարր : « Կէսք ընդ ոսկւոյդ ճահնչաւոր փայլիւնդ զարմացեալք . . . աստուածացուցեալ պաշտեն » (Կոչ. Ընծ. Գ.) . « Զեւ եւս էր բովանդակեալ նորայն (երկրի) կազմութիւն և

ոչ մեծագեղ զարդ փառաւորութեանն . զի ոչ արեգակն էր որ լուսաւորէր քաղցրահայեացն ճառագայթիւք , և ոչ լուսին որ ծագէր ճաճանկալարն նշուլիւք , և ոչ աստեղք փայլէին մեծապայծառ վառմամբն » (Բրտ. Վեց. Բ.) . « Դուք էք լոյս ճաճանկալի խաւարն սեւացեալ » (Մծբ.) :

Զնոյն յայտ առնէ ճառագայթ՝ յաճախ ի բազմաւորականն . « ճառագայթ+ հրոյ անցանէին ընդ մէջ անդամոցն յօչելոց . » « Յերկնից գալոց է Տէրն . . . իբրեւ զփայլակն յայտնապէս ճառագայթիւք լուսաւորեալ . » « Ամենայն ժողովուրդն լէր զձայնն և տեսանէր զճառագայթն . » « Մագեսցին նոքա (արդարքն) իբրեւ զճառագայթն արեգական . » « Մինչեւ ճառագայթ+ հրոյն յՆրուսողէմ երեւէին . » « ճառագայթ+ ի նմանէ հատանէին . » « Աչք նորա իբրեւ զճառագայթն հրոյ : » Ճառագայթ տայ մանաւանդ միտս լուսոյ արձակելոյ շուրջանակի պսակածեւ զլուսաւոր մարմնով . « Թարչամեսցի ոսկեծաղիկն (անթեմ.) զոսկեճաճանչ արեգակն առակէ , զի անթեմն այս երեւելի բանջար է , որ բազմապատիկ շուրջ զիրեաւ ունի բուսեալ ծաղիկս ճառագայթայեւ գտերեւովն » (Վոչ. Ընծ. ԺԵ.) : Ունիմք և ճառագայթարշակ . « Յանկացար ճառագայթարշակ լուսոյ թագաւորութեանն Բրիտտոսի . » « Զճառագայթարշակ զպատմուճանն զգեցոյց » (Ագաթ.) :

Շող է արեւ , իբրեւ սիւն լուսեղէն ծագեալ մանաւանդ ընդ նեղ ինչ տեղի , որպէս ընդ երդ կամ ընդ փեռեկումն ինչ . « Որպէս յորժամ շողն ընդ երդ մտանիցէ , հողմաղք իմն երեւին է շողն » (Սգն.) . « Լուսանցոյց երդոցն է շղան խաղայցէ մանրամաղ փոշին » (Ագաթ.) . « Յորժամ յամպոյ յամպ մտանիցէ և ելանիցէ արեգակն , զՅերմակիծ շողն ամպն յերկիր առաքելով՝ զխոնաւութիւն օդոյն յայտ առնէ » (Բարտ. Վեց.) : Շող ասի և զկայծականց որ թօթափին ի ջեռուցեալ մարմնոց , որպէս յերկաթոյ շողացելոյ . « Որ թուխ յառաջն էր (երկաթ)՝ այն ատրագոյն եղեալ շղս արձակէ » (Վոչ. Ընծ.) :

Յերկուս միտս յայտոսիկ արկանին ի կիր շղան և շղաշողանէ , որոց յաճախ են օրինակք : Յառաջին միտս , իբրեւ փայլատակել , փայլատակեցուցանել՝ « Շողաց հուր զբաղա-

քաւս . » « Սիւն գործեաց հուրն շողացեալ . » « Յորժամ որոտմունք ճայթիցեն , փայլատակունք շողայցեն » ( Ոսկ. Նս . ) . « Շարժումն երեւեցոյց և հուր շողայցոյ զքաղաքաւս » ( Սեբ . ) . « Տէգս արձակիցեն , գեղարդունս շողացոյցանիցեն » ( Ոսկ. Նս . ) : Յերկրորդ միտս՝ « Զեռուցեալ հրագոյն շողացոյցանի ( երկաթագործն գերկաթ ) » ( Սգաթ . ) . « Զնջել ( ջինջ գործել ) զարծաթ և զտել կարես դու և առանց հրոյ , այլ շողացոյցանել և եռանդնացուցանել՝ հրով միայն կարես » ( Նփր . ) : Շողալ յայտ առնէ՝ ուրեք երեւել , խաղալ մանաւանդ ի հեռաստանէ . « Զի մի մթարքն որ զբօքն շողայցեն՝ արգել հայելոյ ի յտակութիւն լուսոյն լիցին » ( Նզն . ) . « Յորժամ մանր նաւք ի մէջ մեծամեծ նաւացն շողայցեն » ( Սեբ . ) . « Ի նոյն օդս գիշակեր թռչունքն ընդ անուագոյն թռչունսն շողայցեն » ( Նզն . ) :

Յարմատոյ անտի շող ունիմք շողեալ , իբրեւ փայլատակումն կամ փայլիւն . « Անդ էր տեսանել թնդիւն վաճանաց , շիահիւն աղեղանց , շողեալ սուսերաց » ( Բ. Մկ . ) , որպէս և շողաշարք , շողաւոր ի նոյն միտս . « Ոչ միաբանի ճաճանչն շողաշարք ընդ մթացեալ միգի » ( Մծբ . ) . « Տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր երեւէր ի վերայ սպարանիցն » ( ի մահուան Մեսրոպայ , ըստ կորեան : ) Ունիմք շողեալ և յերկրորդ միտս , այն է՝ գործել ատրագոյն . « Արդարքն միեցան ի փուռն հնոցի արդարութեան , և ներկան ի շողեալս , ի գոյնս Հոգւոյն » ( Սգաթ . ) :

Նշալ կամ նշալ , ի նմին արմատոյ , թուի յայտ առնել մանաւանդ նուազագոյն լոյս . չիք ուրեք ասացեալ նշոյլ արեգական . « Իբրեւ այս եղեւ , առաւել բոցն ի վեր բորբոքեցաւ . և իբրեւ բոցոյն նշոյլ էղեն , դարձեալ միւսանդամ վառեցաւ բորբոքեցաւ սեղանն » ( Բ. Մկ . Ա . 32 ) . « Որպէս թէ ընդ սակաւ ինչ փեռեկումն ծերպլից նշոյլ երեւեսցին . » « Գիշերի , յորժամ առ ծովեզեր կայցես և զջուրն ժքթիցես , նշոյլ լուսոյ հատանին » ( Նզն . ) . « Ճրագն նշողեալ իւրովք լուսաւորեացէ զքեզ : » Ունիմք նշողաւորք , իբրեւ լուսաւոր . « նշողաւորք է աստղ քան զաստղ լուսով իւրով : » « Մովսէս այր մարգարէ , ակն նշողաւորք ամենայն ժողովրդեանն » ( Մծբ . ) . « Լոյսն ձգեաց զտարածածս իւրոյ նշողաւորք լուսաւորութեանն » ( Վեցօր . ) :

փայլ, թուի իբր լուսաւոր, փայլուն: Դուն ուրեք պատահէ: Ունիմք ուրեք առ Ոսկերերանի. « փայլեալ լապտերօք եկեալ էին և ջահիւք: »

Յաճախ՝ փայլեան, իբր գոյական. « փայլեան զինուց. » « Ձփայլեան ոսկեղէն փառելոց: » « Ապա թէ անդէն ի տեղուջն կացցէ փայլեան և ոչ տարածանիցի. » « փայլեան ինչ կամ մազ սպիտակ. » « Ձոսկւոյն և զականցն փայլեան: » Ձսոյն միտս տան փայլելն և փայլեցոյցանէլ, իբրեւ երեւել, տալ երեւել լուսաւոր. « փայլեցեալ տեսլեամբ նանրութեան. » « Ձվարդապետութիւնն իբրեւ զճառագայթս արեգական փայլեցոյցանէ: »

Վերադիր կամ ածական է փայլեան. « Իբրեւ զտեսիլ փայլեան պղնձոյ. » « Նղիցի տեղի այրեցածին փայլեան. » « Ոչ գոյր չափ պղնձոյ փայլեայ: » Յաճախ վարի կից ընդ սպիտակի. « Ձորձք նորա եղեն փայլեան սպիտակ. » « Փոխեցաւ հանդերձ նորա և եղև սպիտակ փայլեան. » « Փոխեալ իցէ մասն է սպիտակ է փայլեան. » « Նղիցի ի տեղի կեղոյն սպիտակ փայլեան: » Ունիմք և փայլածեան, որ թուի նշանակել մանաւանդ մթաւոյն փայլուն, փողփողել աղօտ աղօտ. « Ոչ ամենեցուն է լոյս տեսանելի. փայլածեան է ի հնութիւնս. » « Նթէ լինիցի ի մորթ մարմնոյ իւրոյ փայլիւն ինչ, փայլածեան ընացեալ. » « Պայծառ և փայլածեան իբրեւ զոսկի լուսաւոր » (Ոսկ. Մտթ.): փայլան, փայլաբան, փայլաբանան՝ ի բազմաւորականն, ասի մանաւանդ զլուսոյն որ շողայ յօգս ստէպ ստէպ և յանկարծ, հանդերձ որոտմամբ, եւս և զկայծականէ. « Որպէս փայլան որ ելանէ յարեւելից և երեւի մինչեւ յարեւմուտս. » « Նւ էր տեսիլ նորա իբրեւ զփայլան. » « Իբրեւ զփայլան յայտնոյ յայնկոյ ընթանան. » « Նլթէ իբրեւ զփայլան նեա նորա. » « Տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրեւ զփայլան. » « Ի փայլաբանէ որ անկաւ ի տունն յորում բնակեալ էր նա՝ ի գիշերի վառեցաւ հուրն ընդ ամենայն տունն » (Նւս. Պտմ.). « Ի տուն նորա փայլաբանէ տեղացին, և նա խարչատեալ սատակէր. » « Ներոնի, մինչդեռ սեղան առաջի կայր, փայլաբանէ անկան ի վերայ » (Նւս. Քր.). « Ձմտաւ ած, ո՛րչափ բարկութեան, քանի՛ փայլաբանայ գործս գործեմք » (Ոսկ. Մտթ.):

Յայտ առնէ և զճառագայթից որ հատանին ի լուսաւոր մարմնոց . « Կայծակունք թօթափէին ի նոցանէ իրրեւ ի փայլաբանոց պղնձոյ . « Ի փռնչելոյ նորա փայլաբանս հատանին . » « Փայլաբանս հատան ի նմանէ . « Որպէս զճառագայթս իսկ զգեցեալ՝ այնպէս պայծառագոյն առնէ , ոչ յերկիր ծագեալ զփայլաբանս , այլ եւ քան զերկինս ի վեր տարածեալ » (Ոսկ. Մտթ. ) :

Այսպէս փայլաբանել և փայլաբանեցողանել յայտ առնեն ոչ զօգերեւութէն միայն , այլ եւ զշողալոյ լուսոյ կամ զճառագայթից որ հատանին ի լուսաւոր մարմնոց . « փայլաբանել զիայլատակունս քօ . » « Որպէս փայլակն , փայլաբանել ի ներքոյ երկնից . » « փայլաբանեցոց զիայլատակունս . » « Հուր փայլաբանել ի նմանէ . » Ի պղնձապատ վահանացն նշոյլքն զլերամբքն փայլաբանելն » (Ս. Մկ.) . « Յանկարծ շուրջ զնովաւ փայլաբանեաց լոյս յերկնից . » « Սաստիկ կայծակունս յաչաց փայլաբանեցողանցն . » « Փայլաբանեցն ի ձեզ գլոյս և զհուր » (Ագաթ.) :

Յարմատոյ անտի , փայլ , եւն առանց երկրայութեան փողէն և փողողել : Զառաջինն ունիմք առ Բուզանդայ , իրրեւ ստէպ ստէպ փայլել , ի խօսելն զմարմնոյն Համազասպուհւոյ կախելոյ զբարձուէն . « Իբրև ոչ առնոյր յանձն Համազասպուհի պահել զօրէնս Մագդեղանցն , հանէին ի բարձր աշտարակն (բերդին վանայ) որ կայր ի վերայ բարձր գահուն քարին որ հային ի կողմն ծովակին ի գետոյ կուտէ , և մերկացուցին զնա իբրև ի մօրէ , և արկեալ կապ զտոխն՝ զլիսիվայր կախեցին զնա զբարձուէն կուտէ . և այնպէս մեռաւ ի կախաղանին : Եւ էր նա սպիտակ մարմնով , և պայծառ տեսանելովն . կայր կախեալ յերեւոյթ տեսիլ նշաւակի , և փողփողեր մարմնն ի բարձուէն զոր օրինակ ձիւն սպիտակութեամբն . և բազում մարդիկ ժողովէին տեսանել օր ըստ օրէ , զի իրրեւ սքանչելի ինչ երեւէր յաշխարհին » (Բուզ. Դ. ԾԹ.) : Երկրորդն , փողփողել , ասի զնշանաց կամ զգրօշուց տառաներոց յօդս . « Յայն ահեղ տեսիլ Յուդա հայեցեալ տեսանէր զզնդացն դրօշու դրօշու պատրաստութիւն , զնշանացն փողփողել » (Ս. Մկ. ԺՆ. 21.) . « Յորժամ զտիկինն ամենայն աղիւսն յուղարկեցին յամուրն , և ինքեանք վառեալք կար-

գեալք կազմեալք ի պատերազմն , ի մի վայր գումարեալք , նշանս արձակեալք դուռս փոփոխեալ ըստ Գեւղն աւան ի դուրս ելանէին ընդ կողմն արեւմտից » (Բուզ. Ե. 109.) : Փողփողել ասի զոսկեթեւ հիւսուածոց ի վերջաւորս որ արդարեւ փողփողեն . « Ոսկեղէն և արծաթեղէն զարդուք , ի վերջաւորս փոփոխեալ պալարակապ մետաքսիւքն և ոսկուվք » (Աղաթ.) : « Արարին ընդ տախտակաւն վերջս փոփոխեալ » (Ել. 110.) :

Ձէ պարտ մոռանալ աստէն և պարտաւորէն ի նմին արմատոյ , իբրեւ փայլել . « Որպէս յստակ ջուր զվճիտ լոյս արեգական առեալ՝ առաւել պարտաւորեց » (Ոսկ. Ես.) : Աւնիմք պարտաւորեալն , իբրեւ վերագիր . « Եթէ արծաթ պարտաւորեալն քայքայէ զմեզ , ե՞րբ զգեց երեսաց կարասցուք քամահել . » « Միւնս և խարիսխս արծաթի , պարտաւորեալն , ջինջս և յստակս » (Ոսկ. Մտթ.) : Նշանակէ և ուռուցեալ ինչ ի գոյն և ի կերպարանս պալարոյ . « Ճակատն պարտաւորեալն , այտքն ի ներքոյ միահարթք , երկայնածնօտք » (Ոսկ.) : որպէս և պարտաւորեալն են գահոյք հովանաւորք վրանաձեւ . « Սաւուղ ննջէր ի պարտաւորեալն » (Ա. Թագ. ԻՁ. 5, 7) : Պարտաւորեալն կոչի ազգ ինչ սպւոյ կամ արածի փայլուն . « Եթէ լինիցի ի մորթ մարմնոյ իւրոյ նշան սպւոյ , կամ պալար , կամ պարտաւոր . » « Սպա եթէ պարտաւոր սպիտակ իցէ ի մորթ մարմնոյ նորա . » « Սպւոյ և պալարի և պարտաւոր » (Ղեւտ.) : Զսոյն տայ իմանալ և պարտաւորեալն , իբրեւ պարտաւորեալն , պալարաձեւ :

Ա. Մ. Գ.

### ԹՈՒՂԹ ԱՌ. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Յերկրազնդի ամսեանն նոյեմբերի յեսնոյ ընթերցաք յօդուած մի վերնագրով այսուիկ . Երասուրդ Հիւրօղեան և Տեւեմատայ նար խորհրդակից , զոր գրեալ է Մ. Կ. :

Կարի իմն շարժեաց յօդուածն զժաղրն մեր . քանզի թուէր մեզ տեսանել մանուկ մի՝ սուր երկայնածիգ ի ձեռին անել խառն ի խուռն հարուածս յաջ և յահեակ յամբոխի ուրեք բանակի զօրաց :

Զարմանք մեծ են արդարեւ թէ զիմօրդ թարգմանու-  
թիւնն մեր որ այնպէս անօգուտ , անպիտան , անհամ , ան-  
զարդ և չգիտեմք զինչ այլ պէտ համարեալ է և քարոզի  
իսկ մեծաբարբառ աղաղակաւ ընդ ամենայն աշխարհ , այն-  
չափ դժուրեալ խռովեցոյց գրագումն , մանաւանդ զայնոսիկ  
որ գյոյս եղեալ են ի շահս օգտի իւրեանց վաճառացն :

Նախ՝ պարսաւադիրն մեր թուի հմայս հմայել . քանզի  
յախուռն յանգէտս , ըստ կամի հաստատեալ ասէ՝ թէ մեր  
կէտ նպատակի է նշաւակել զթարգմանութիւնն Հիւրմիւզ-  
եան , զոր ոչ ուրեք տեսեալ է մեր երբեք . իսկ զնախաւորն  
թարգմանութեան զոր նայն յիշատակէ՝ և ոչ մի բան և ոչ  
կէս բանի լուեալ է մեր և ոչ զանունն ուսեալ զթարգման-  
չին : Ապա յայտ է թէ Մ. Կ. հմայիւք և կախարդանօք  
գուշակել կամի որ ինչ ի միտս մեր բունեալ է : Գարձեալ  
այլուր ասէ թէ զհետ երթեալ է մեր զչաւըաց Յովէ . Կա-  
թողիկոսի . բայց մեք յերազի անգամ չեմք տեսեալ զմատ-  
եանդ :

Զարմանալի են յոյժ և անստգիւտ դատաստանք բարե-  
կամին մերոյ : — Զի Հիւրմիւզեան թարգմանեալ է , ասէ ,  
զՏեւեմաք , զի՞նչ պիտոյ է թէ այլ ոմն եւս թարգմանեսցէ  
զայն : Հարցցուք և մեք . Հիւրմիւզեան ընդէ՞ր թարգման-  
եաց զՏեւեմաք , մինչ այլ ոմն թարգմանեալ էր զայն յառաջ  
քան զնա . նա՞ թէ և թարգմանիչն յիւրմէ իսկ Միաբանու-  
թենէ էր : Այսպիսի անկարծ և անընդդիմակ վճիռք որ ասի  
ի բերան առնեն զընթերցողս՝ յաճախագոյն են ի յօդուածի  
անդ : — Զոր օրինակ .

Կալ է «—» . քաջ ընտրութիւն . (Ա. վճիռ) .

Անփոխար Ընդ Նա . ընտիր հայկաբանութիւն . (Բ. վճիռ) .

Ո՛չ ապաքէն ընծայութիւնք են սոքա խոհական փիլիսո-  
փայութեան , եւ ճշմարտութիւնք սերտք զորս չէ մարթ ու-  
մեք ժխտել :

Նախանձու իմն ճշմարտութեան վառեալ բարեկամն մեր  
եւ կալեալ շանթս բիւրապատիկս ի ձեռին , ամենեւին կազմ և  
պատրաստ ի վրէժխնդրութիւն , յածի շրջի և մանր կրկտեալ  
որոնէ՝ թէ զիմօրդ դտանիցէ զթարգմանիչն և մանաւանդ

զպատճառսն այր վասն եկն սա ի թարգմանել: Եւ եթէ չե-  
րեւեցցին նմա հաճոյ բարուքն մեր, վայ, վայ է մեզ. յայն-  
ժամ մեք և թարգմանութիւնն մեր զգետնի հարեալ և ա-  
ռակ նշաւակի եղեալ անկանիցիմք յանդունդս անհունս:

Զկայ առ, բարեկամ, մի՛ այնչափ բուռն լինիջիր ի վազն  
քօ. մեք դատաւոր գրեզ ոչ կամիմք, ոչ զշիւրմուղեան, ոչ  
զբազրատունի և ոչ զայլ ոք: Ունիմք մեք առաջնորդ մեզ  
և կանոն զհին հարազատ և ընտիր լեզու մատենազրաց Յ.  
դարուն. զայն միայն ճանաչեմք օրէնս: Հիւրմուղեան և  
Բագրատունի ոչ էին, որպէս դուդ հաւատաս, ընտրեալք  
յԱստուածախոյս կողմանէ լինել իշխան և միահեծան տէր մեծ-  
ատուն մեծասքանչ և չքնաղ լեզուի մերոյ: Նա ասացն ո՛չ  
ուրեք է այսօր: Եթէ արքդ այդոքիք պատկառելիք տէր ոչ  
էին Հայ լեզուի, ապա եւս առաւել չէ քեզ իշխանութիւն  
քննելոյ, խժըժելոյ և ըստ կամի և ըստ քմաց դատաւար-  
տելոյ զայլոց գրեանն: Ունիմք զչափ գիտութեան քոյ և կարի  
քաջ ծանեաք զզօրութիւն քօ և զկար: Ո՞չ ապաքէն թուղթն  
քօ առ Եղիա է՞Քէնտի Տէմիրճիպաշեան, որ գտանի ի նմին  
խակ Հանդիսի, տայ մեզ զկշիռ ծանրութեան հանճարոյ քոյ և  
զմեծի և զանխալ հմտութեան քոյ ի բարբառն սքանչելի ոս-  
կեղէն դպրութեան Յ. դարուն:

Դու, վարդապետդ, ուսուցանես մեզ և ամենայն աշ-  
խարհի՛ թէ պարտ է ասել.

Ձ— Ողբեալս վոխանակ մեկնելոյ,

Կախիսե և ոչ Կախիսոյ,

Հառաչեր ասելով ին ընդէ՞ր անմահ եմ, և ոչ հառաչեր թե ընդ-  
է՞ր անմահ եցեմ,

(Ս.յրն) հնչեր գնաց երգոց նորս, և ոչ հնչեցոցաներ գնաց  
երգոց նորս,

(Նաւն) անքնդահերջ պարպեմ անհեղացեալեր, և ոչ զայն ծո-  
գում պարատեալ անհեղ. յաւաց լեալ էր:

Դարձեալ ուսուցանես դու թէ

Կարէլ բաղում ուրեք չէ հայերէն!!!

Միեխարսնեան քրանել տաճկերէն է!!!

Ուստի ուսմակահան է!!!

Բա՛շ է Բայ չգիտեմք զի՞նչ է (\*):

Այդէ, միթէ եւ դու իբրեւ զՀ . . . (2) ո՞նմ բանդադու-  
չե՞ս, խեղկատակիս և ծա՞ղր առնես . և կամ ձաղել և ա-  
նարդե՞լ կամիցիս զգարմանալին, զանգին և զճնաչխարհիկ  
բարբառն մերոց նախնեաց, զաղբերն անսպառ, յորմէ կամք  
և փոխ առնումք անդադար բանս, ասացուածս և ո՞նս ի պէտս  
ուսմիկ բարբառոյն զոր ի կիր արկանեմք այսօր: Միթէ և  
դու զտակին ո՞ոպ համարիս իբրեւ զնա . եթէ այնպէս՝ ապա  
հարկ է թէ և սսպն ձեզ սսկի իցէ:

Եկեսցուք այժմ ի պատճառ անդր որ ամ զմեզ ի թարգ-  
մանել զՏելեմաք: — Ձէ և չէ ընդունայն իմն սէր փառաց  
կամ խօլ տենչանք սլայծառ և քաջանուն երեւելոյ, որպէս  
դու կարծես, ոչ զբօսանք ինչ պարապոյ ժամանակի և ոչ  
եռանդն և իղձ ի կշիռ համեմատութեան բերելոյ զվաստակն  
մեր ընդ թարգմանութիւնսն առաջինս, որ չեն բնաւ մեզ  
ծանօթք: Ա՛յլ իմն է զատ և ամենեւին որիչ յայդմ ամե-  
նայնէ, որպէս յետոյ ասելոց եմք:

Օրէնք ինչ են ի բնութեան և ի բոյսս բարուց մարդկան,  
որ, ըստ այժմու մատենագրաց, Յետաշրջութիւն կոչի (Réac-  
tion): Յորժամ թիւր ինչ սկզբունք շահեալ տիրեն համօրէն,  
ամենայն ինչ խանգարեալ հիմն ի վեր յատակի . որ ինչ  
բարի է՝ խոտի և անարգի, և որ յոռին է՝ այն մեծարի և  
ի պատուի կայ . մինչ այսպէս տեւեն բաւեն իրքն ի խառ-  
նակութեան և յանկարգ գնացս իւրեանց, յանկարծակի  
արք ճշմարտասէրք և ողջամիտք իջեալ ի կրկէս մաքառին  
կուռին բազում անհնարին ճգնութեամբ, յարիւն յապաժոյժ  
համակին, մինչեւ խլեալ կարճեսցեն զսկզբունսն զայնոսիկ  
թիւրս և ի չափ և յուղղութիւն ամիցեն զկարգն աղաւաղեալ:

Չնոյն է տեսանել և ի պատմութեան հայ մատենագրու-

---

(\*) Յշմարեմք աստ ինչ մի անասնական զոր ընդ քողով իմն ծած-  
կեալ բերես ի մէջ . Բայց մեք չհամարիմք զայդ արժանի գրչի որ գիտիցէ  
զանձն պատուել: —

(2) Ձէ ինչ արժան ի Հանդիսի աստ ողջ ամել զանունդ, որ է զուգ-  
ական տգիտութեան եւ ստուծեան .

թեան : Պատուականն և առ ի յամենեցունց վկայեալ հոյակապ և չնաշխարհիկ լեզու ոսկեղէն ժամանակի մատենագրութեան մերոյ՝ կրեաց փոփոխմունս բիւրապատիկս և ազգի ազգիս , որոյ օրինակն ո՛չ ուրեք տեսանի ի պատմութեան լեզուաց այլոց ազգաց : Ի մեծաշուք փառաւորութենէ անտի յոր բարձրացեալն էր ի սկզբան անդ Կ. դարուն՝ վաղ իսկ անկանէր վասն քաղաքական փոփոխութեանցն որ զամենայն կարգս իրաց աշխարհին վեր ի վայր կործանեցին : Ոչ միայն սեպհական գեղ յօրինուածութեան լեզուին վատթարեալ աղաւաղէր ի դարէ ի դար , այլ և բազում խանգարութիւնք և օտարոտի խորթ ձեւք և ասացուածք մտեալ խառնէին ի յտակ և ի բնականոր ազնուութիւն անդր նորա : Բազում մատենագիրք , անգէտք հարազատ հանգամանաց տոհմային բարբառոյ իւրեանց և ճաշակի և սովորութեան այնր ժամանակի , ձեւս ինչ բանից Հելլէն լեզուի յաճախադոյնս արկանէին ի կիր , և եկամուտ խոթադուծ յաւելուածովքն ձիւաղ իմն լեզուի հանէին ի հրապարակ : Այլք , յետ դարուց ինչ , յաւելին մուծանել ի լատին բարբառոյ անտի ձեւս և կերպարանս անճահս անհեթեթս , որ ամենեւին օտար էին ի մեծատուն արեւելեան շքեղութենէ Հայերէն լեզուի : Այսպէս վատթարեալ աղաւաղեալ գամ քան զգամ և խառն ի խուռն վարեալ հասանէր մինչեւ ի ժԹ դար . աստ զկայ առեալ կայր ժամանակ մի :

Ի մէջ կոյս դարուս այսորիկ՝ արգասիք օրինացն յետաշրջութեան եկին յայտ : Արք հանճարեղք և գործօնք մանր խիլ արկեալ բրեցին պեղեցին զժածուկ գանձս լեզուին , և սկսան հանել զնոսս ի հրապարակ ի տես և ի ցոյց այնոցիկ որոց ոչ էին փակեալ աչքն : Ի մէջ սոցա , որ ի վեր հանին զգանձան ծածկեալս և ի մէջ այնոցիկ որ , իբրեւ պահապանք կարծեցեալ հին իմն ոճոյ և սովորութեան , պնդեալ յամառէին յանձահ խորհուրդս իւրեանց , հաստատեցաւ մրցութիւն : Այսպէս մատենագիրք մերոյ ժամանակի (\*) բաժանեցան յերկուս ջոկս , որք զհնութիւնս ինչ անհարազատս

(\*) Զայս չէ պարտ իմանալ զմատենագրաց որ զրնն ի ռամկական հայ բարբառ :

և անուարեալս պահել ասորժին՝ կան ի մի կոյս, և ջոկն յետաջրջականաց ի մեւս այլ կողմն: Մեք որ ի յետաջրջականաց թերէ եմք, առ ի կցորդ և բաժանակից լինելոյ վատակոց նոցա, տուաք զոյս տեսանել հատակոտորոց ինչ թարգմանութեանն մերոյ ի Տեւեմաքայ ի Ճաշակ հանդիսի, որ միջնորդ և գլխաւոր գործի համարեալ է և է իսկ՝ սկզբանց և վարդապետութեան նոցա: Ահաւասիկ պատճառ այս է թարգմանութեանն մերոյ: Թէպէտ վարկպարագի իմն գիտէաք՝ թէ գոն և այլ թարգմանութիւնք, սակայն, առանց ծանօթս ինչ ունելոյ զնոցանէ, ոչ կարէաք առնուլ յանձն թէ էին այնպէս որպէս մեքն ցանկանայաք:

Զի՞նչ իցէ մրցութիւնդ այդ, կամ զի՞նչ այլակերպութիւն կարծեաց երկուց նախանձընդդէմ կողմանց: Աւելորդ համարիմք աստ կալ և երկարագոյնս խօսել զայդմանէ: Մատենագիրք բազումք ի դասէ անտի յետաջրջականաց լայնագոյնս և պարարտագոյնս ճառ արկեալ մեկնեցին զայդ ամենայն, և գրեալ թէ նշանացի մատամբ ցուցին ի գիրս իւրեանց (1), մինչեւ ի լրագիրս անգամ: Սակայն դարձեալ անմիաբանութիւնն տեւէ մինչեւ ցայսօր: Թուի մեզ թէ առ ի յարդիւնս ածել զհաշտութիւն երկոցունց կողմանց չիք այլ հնար, այլ գալ նոցա և ժողովել համագունդ ի մի ժողով և անդ ի պայքար մտեալ վիճել զննել, և յետ մանր ի քնին արկանելոյ զամենայն կէտս նիւթոյն՝ հաստատել հանել զճշմարտութիւնն ի հրապարակ: Ի շիմանէ կարծեաց ծնանի ճշմարտութիւնն, ասէ առակն:

Ոչ վասն սնապարծ ինչ պարծանաց և ի ցոյց պարտ է մեզ մշակել զհին բարբառն մեր. այլ, որպէս ճաշակն յայտ առնէ, վասն այնորիկ զի նա կարի չահաւոր և օգտակար է առ ի մատակարարել ատաղձս և նիւթս անգինս առ ժողովրդակիան արդի լեզու մեր, որ անհաստատ և փոփոխական է և չունի կարգս դպրութեան կանոնեալս: Արդ ցորջափ չէ սա հաստատուն և հասեալ ի կէտ ինչ անչարժ յօրինուա-

(1) Զայսմանէ ընթեռնուլ զհամառօտ պատմութիւն Հայ մատենագրութեան ի «Քերականութեան Հայկազնեան լեզուի» ածելոյ ի լոյս յամին 1885 ի վիեննա:

ծուծեան, կարօտ է խնամոց մայր բարբառոյն, որոյ ծնունդն է:

Ունիմք ինչ ասել ցպարսաւադիրն մեր որ արդարեւ չէ ամենեւին անդէտ հին ընդուի մերոյ . արդ յորդորեմք վնա գալ զամ մի ողջոյն զընթերցուածով ընտիր և հռչակաւորագոյն մատենագրաց Ն. դարուն . և խոստանամք նմա՝ թէ յետ միոյ ամի ոչ կարասցէ ընթեռնուլ և ոչ էջ մի յամենայն մատենից սյնոցիկ զորոց կաթողին է՝, որպէս դէպ եղեւ և մեզ: Յայնժամ, փոխանակ վայրապար զճշմարտութիւնն աղարտելոյ, և զլոյսն խաւար՝ և գխաւարն լոյս համարելոյ, յողջամիտ կողմն անդր միտեալ սատար եւս և աջակից մերում ոճոյս լինիցի (1):

Ս. Գ.

Ի 24 դեկտեմբերի, յամին 1886.



## ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ Հ Ա Յ Ե Ր Ի Ն Լ Ե Ջ Ո Ի Ի

### Բ

Ի ԲԵՐԱՆ . «Կէքը . առջի բերան: \*Յերկիրն եգիպտացւոց իջոյց զնոսա առ հաց ի բերան սովուն:

ԲԵՐԱՆ Ի ԲԵՐԱՆ . բերնէ բերան . դիմացէ դիմաց: \*Բերան ի բերան խօսեցայց ընդ նմա, երեսօք և ոչ առակօք: — \*Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսիւ և գեղով. զի ակն ունիմ ինձէն իսկ զալ առ ձեզ, և բերան ի բերան խօսել:

ԲԵՐԱՆԱԲԱՅՑ ԼԻՆՅԼ . բերանը բաց մաւ. աղլի մաւ: \*Նիժէ ժողովեցեն զոսկի և զարծաթ և զամենայն բարու թիւնս, և տեսեալ կին մի գեղեցիկ . . բերանաբաց եղեալ հային ընդ նա:

ԲԵՐՅԼ Ի ԳՈՐԾ . Գործաբերէ. կարտերէ: \*Չհրամայեալն ի գործ բերել: — \*Մինչև ի վախճան զհրամայեալն ի գործ բերել:

(1) Առ ի չոյէ տեղոյ, գլաւելուած թղթոյս յանձնեալ մեզ աւորքք ինչ յառաջ՝ անցուք ի լոյս ի Գ. Թուի ճաշակիս: Ծ. Խ.

ԲԵՐԵԼ Ի ՀԱՄԱՐ . հաշտել . համբել : \*Չարդասխան ըարեաց  
ազգին՝ այլազգիքն ի համար ոչ բերէին : — \*Չի՞նչ բերիցեմք  
ի համար զմեր նեղութիւն :

ԸՆԴ ԲԻԲ ԱԿԱՆ ԸՆԴ-ՀԱՐԿԱՆԻՄ . աչին շարնել՝ դուրել :  
\*Որ մերձենայ ի ձեզ՝ որպէս որ ընդհարկանիցի ընդ բիր ա-  
կան իւրոյ :

ԲԻԾ ԴՆԵԼ .

ԲԻԾՍ ԿԱՐԿԱՏԵԼ .  
Ի ԲԻԾ ՏԱՆԵԼ .

արաս դնել . յեղարբել . վար շարնել : \*Ո՞  
կարէ բիծ դնել ընտրելոյ Աստուծոյ :  
— \*Նրկիցուք մեք ի թոյլ տալոյ փո-

քունց , գուցէ մեծամեծ բիծ դնիցեմք յանձինս մեր : — \*Ըն-  
դէ՞ր ասէին զայս . զի դարձեալ բիծս ինչ կարկատիցեն : —  
\*Քանզի այլ ինչ չգիտէին ասել , այնու իմն բիծս կարկա-  
տէին : — \*Եթէ ի գձուձ կերպարանս (տեսանիցեն զաղքատն ,)  
և զայն եւս ի բիծ տանիցին :

ԸՆԴ ԲՆԱԻ . աֆն կողմ : \*Ընդ բնաւ սլանան (կառք) : —  
\*Հռչակ հարէք ընդ բնաւ վասն իրացդ գործելոց : — \*Խոնաւ  
և ջուր էր ընդ բնաւ :

Կամ՝ աֆն աֆնը . բողբոբ : \*Ընդ ամենայն խգ . ողիմ-  
պիադք , և ընդ բնաւ՝ ամբ ձկդ . :

ԲՈՂՈՔ ԱՐԿԱՆԵԼ , ՀԱՐԿԱՆԵԼ , ԲԱՌՆԱԼ , ՈՒՆԵԼ . բողմել .  
գանձբոբել . իրասանս՝ ուղել : \*Բողոք արկի առ ձեզ : — \*Մի՛ բո-  
ղոք հարկանիցէ զքէն առ Տէր : — \*Բողոք բարձեալ ալաղա-  
կիցեն առ իս : — \*Չի՞նչ իրաւունք կան իմ այսուհետեւ բողոք  
ունել միւսանգամ առ արքայ : — \*Բողոք կալան առաջի փա-  
րաւոնի : — \*Որդի՛ մարդոյ , բողոք կալ ժողովրդեանդ այդմիկ :

Ի ԲՈՒՆ , ՅԲՈՒՆ . մինչև ետք : \*Անշուշտ մինչև ի բուն  
զհաւատարիմ սէրն . . . պահեսցեն : — \*Իշխանութիւնն հաս-  
տատուն եկաց ի բուն : — \*Ոչ նոյնպիսի կայր ցբուն : — \*Չնոյն  
ունիցիմք մինչև յբուն :

ԲՈՒՌՆ ՀԱՐԿԱՆԵԼ . յեռ դնել . դուրել . փախել . \*Բուռն  
եհար Սամիսոն զերկուց սեանցն միջնոց :

Կամ՝ յեռ շարնել . սիւիլ : \*Բուռն հարկանէին զսպասա-  
ւորութենէ : — \*Չիշխանութենէ բուռն հարին :

Ի ԲՈՒՌՆ ԱՌՆՈՒԼ , ԱՐԿԱՆԵԼ . } յեռ յգել . բունել . առնել :  
ՁԲՈՍԱՄԲ ԱԾԵԼ , } \*Հատոց զօր աւելի քան

զհինգ հազար՝ երթալ ի բուռն առնուլ զնոսա : — \*Յեղա-  
կարծում ժամու զամենայն քաղաքն ի բուռն արկանէր : —  
\*Չբռամբ ածելոց իսկ է զվեժ վիշապն : — \*Մենեղաւոս իբրև  
լուր արարեալ զՎնդրոնիկոս . . . նովա ջանայր զբռամբ ար-  
կանել զՈնիա :

Ի ԲՈՒՆ ՈՒՆԵԼ. յեւոն սանեալ՝ բռնել : \*Չերկիրս ամենայն  
ի բռին իւրում ունի :

Ի ԲՈՒՆ ՈՒՆԵԼ ԶՈԳԻ. ինչպէս հահասան շրանգին ենեարկել.  
ճահն ալս առնել : \*Չողխն ի բռին ունել, և ի սպանութիւն  
մտաբերել :

Ի ԲՈՒՆ ԱՆԿԱՆԵԼ. յեւոն ինչալ. ճարտուել. բռնուել : \*Գողն  
. . . ի բուռն անկեալ՝ չլինիցի՞ մահապարտ : — \*Նոյ ըմպէր  
գինի և անկանէր ի բուռն քնոյ :

ԲՈՒՆ ԱՌՆԵԼ, ԼԻՆԵԼ. բռնանալ. անբարոյեան՝ զրկանդ  
ընել : \*Բուռն առնես ժողովրդեան քում : — \*Ոչ եւս բուռն  
լիցին իշխանք որդւոցն իսրայելի՞ ժողովրդեան խմում : — \*Մի  
բուռն լինիցիս տնանկի : — \*Մարդոյ բուռն ոչ լինիցի :

ԲՐԱԾԵԾ ԱՌՆԵԼ. հասպանով ծեծել : \*Բրածեժ առնէին  
զանձն նորա ի կախաղանի անդ :

ԲՐԱԾԵԾ ԼԻՆԵԼ. հասպանով ծեծ որել : \*Բրածեժ եղեալ  
. . . քահանայապետն Աստուծոյ սուրբ (Յուսիկ) . . . ընկեց-  
եալ լինէր :

ԲՐԴԻՄ Ի ԲԱՐԿՈՒԹԻՒՆ. բարկանալ. զբէրել : \*Իբրև ետես  
Մատաթի՞ ի նախանձ բարկութեան բրդեցաւ : — \*Իբրև լսէր  
զբանս անօրէն բանսարկութեանն, ի սրտմտութիւն բար-  
կութեան բրդեցաւ թագաւորն :

Յ. Գ.

( ԿՍԱՐՄԾ «Բ» ՆՇԱՆԱԳՐԻ )

---

---

ԻՆԱՄԱԿԱԼ\* ՀԱՆԳԻՍՒՍ

Յ. ԳՈՒՐԳԷՆ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

---

---

## Պ Ա Յ Մ Ա Ն Ք

---

Ա. Գին միամեայ բաժանորդութեան Հանդիսիս՝ 25 դահեկան ոսկւոյ , հատուցանելի կանխաւ .

Բ. Ծախք թղթատարի ի գաւառս և յերկիր օտար՝ դահեկան արծաթոյ 6 ի տարւոջ .

Գ. Զգին բաժանորդութեան , զթուղթ և զամենայն գիր առաքել պարտ է , յանուն խնամակալաց Հանդիսիս , առ Տ. Յովսէփ Գավաթեան , գրավաճառ ի Կ. Պոլիս , ի Զաքմաքճըլար .

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիս մարթ է ստանալ 3 դահեկանայ առ ամենայն գրավաճառս Կ. Պոլսոյ :

---

Վ Ր Ի Պ Ա Կ

( յ Բ . թ ո ո ի ձ )

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
26	44	Արմինեոս	Արմինիոս :

---

Վ Ա Ճ Ա Ռ Ի

Ե Ր Ի Ց Գ Ա Հ Ե Կ Ա Ն Ա Ց

---

معارف نظارت جلیله سنک ۹۱۰ نومرونی رخصتنامه سیه طبع اولمشدر

---